# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**28 հունիսի 2017 թվականի N 89-Ա**

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի հունիսի 27-ի N 130-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2017 թվականի հունիսի 27-ի N 11625-17 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ *Հարություն Ալեքսանյանին* 2017 թվականի հունիսի 30-ից մինչև հուլիսի 4-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում՝ *երեք օրով*, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք՝ *2017 թվականի իրավական և մասնագիտական հսկողություն* իրականացնելու համար:

2. *Հարություն Ալեքսանյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ *Արմեն Հակոբյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի հունիսի 28**
**ք. Հրազդան**